«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 51/02

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 16.10.2019թ. ժամը 16:00

Համաձայն «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 10.05.2019թ-ին ստացված,«Էյչ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի թիվ 97 դիմում- բողոքի,կարգապահական հանձնաժողովին մակագրված 02.09.2019թ-ին, հետագա ընթացքը ապահովելու նպատակով, «Բյուրակն»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝Ռուբեն Խալաթյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ ս/թ-ի Հոկտեմբերի 16-ին,16-00-ին ՝ ք.Երևան, Արշակունյաց 5 հասցեում,հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը

Դիմումատու՝«Էյչ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն
«Բյուրակն»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝Ռուբեն Խալաթյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
«Բյուրակն»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝Ռուբեն Խալաթյանը
Դիմումատու՝«Էյչ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ը պատշաճ ծանուցված լինելով նիստի տեղի և ժամի վերաբերյալ իր լիազորված ներկայացուցիչների ներկայությունը չէր ապահովվել:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ
1. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 10.05.2019թ-ին ստացված,«Էյչ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, «Բյուրակն»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝Ռուբեն Խալաթյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ ՝
Մինչև օրակարգի հարցի քննարկման անցնելը հանձնաժողովի անդամ՝Ռ.Խալաթյանը առաջարկության համար ձայն վերցրեց և ներկայացնելով այն փաստը,որ օրակարգում ընդգրկված է իր,որպես սնանկության գործով կառավարիչի՝ վարքագծերի վերաբերյալ հարցի քննարկում, ինքը որպես հանձնաժողովի անդամ ինքնաբացարկ է հայտարարում և առաջարկում է քվեարկությունը կազմարպել առանց իր ձայնի:
Նիստի մասնակից հանձնաժողովի անդամները քննարկեցին ինքնաբացարկը,ընդունեցին այն ճիշտ և նիստի վարման կանոնակարգին համապատասխան ու հարցը դրեցին քվեարկության՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Չեռնպահ – 0

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը ստուգեց նիստի մասնակիցների ինքնություն և քանի որ՝«Էյչ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցիչը ներկա չէր, ներկայացրեց դիմում-բողոքը և մասնավորեցրեց,որ կառավարչի գործողությունները վճարման ժամկետների մասին կնքված պայմանագրի հետ կապված, դիմումատուի և Վերաքննիչ քաղաքացիական դատարանի կարծիքով,չեն համապատասխանում օրենքներին և դրանով կառավարիչը թույլ է տվել կարգապահական խախտում,որի համար բողոքաբերը կարծում է,որ կառավարիչը պետք է ենթարկվի համապատասխան կարգապահական պատասխանատվության:

Հանձնաժողովի նախագահը հայտնեց նիստի մասնակիցներին,որ սույն բողոքը հանձնաժողովը լսել է դեռ 05.04.2019թ-ին և տվել է իր եզրակացությունը, երբ առկա էր ՀՀ Սնանկության դատարանի 13.02.2019թ-ի ԵԾԴ/0046/04/13 որոշումը,որը բողոքաբերի կողմից բողոքարկվում էր ՀՀ Վերաքննիչ Քաղաքացիական դատարանում:Այժմ բողոքաբերը կրկին այն ներկայացրել է, հիմքում դնելով 25.04.2019թ-ի ՀՀ Վերաքննիչ Քաղաքացիական դատարանի ԵԾԴ/0046/04/13 որոշումը,ըստ որի վերքննիչ բողոքը բավարարվել է և բեկանվել է ՀՀ Սնանկության դատարանի 13.02.2019թ-ի ԵԾԴ/0046/04/13 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ Տ,Հարությունյանը ձայնի իրավունք տվեց «Բյուրակն»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝Ռուբեն Խալաթյանին,ով ներկայացրեց հանձնաժողովին, որ Վերաքննիչ դատարանի որոշման հիմքերը և պատճառաբանությունները առ այն որ բեկանման հիմք է հանդիսացել այն փաստը որ տարաժամկետման պայմանը դատարանը համարել է «Էական» և գտել է,որ այն պետք է արտացոլվեր նաև հայտարարությամբ,որը կստեղծեր հավասար պայմաններ բոլոր պոտենցիալ գնորդների համար:Բեկանված որոշումը ետ է ուղարկվել ՀՀ Սնանկության դատարան որտեղ ել նշանակվել է նոր քննության,բայց մինչ այդ գնորդի կողմից քննարկվող պայմանագրով սահմանված ժամկետներում վճարումներ չի կատարվել և աճուրդը 21.06.2019թ-ի արձանագրությամբ համարվել է չկայացած,որպիսի փաստով էլ իր կողմից 24.07.2019թ-ին դատարան է ներկայացվել է միջնորդություն ՄՆԴ/0018/02/19 քաղ.գործը կարճելու համար,քանի որ այն դարձել է առարկայազուրկ:

Կառավարիչը հանձնաժողովին ներկայացրեց նշվաշ փաստաթղթերի լուսապատճենները և միջնորդեց կարճել նաև կարգապահական վարույթը,քանի որ այն նույնպես առարկայազուրկ է,քննարկվող պայմանագրի չկատարման և վերացման փաստով:

Հանձնաժողովի անդամ՝Հ.Մարտիկյանը ձայնի իրավունք վերցնելով ներկայացրեց,որ իրենք ծանոթացել են դիմումին որը նույնաբովանդակ է ինչ նախորդ դիմումը և որի վերաբերյալ հանձնաժողովը տվել է արդեն իր եզրակացությունը և հատուկ կարծիքի և առաջարկի ձևով ներկայացրել է նաև հայտարարության մեջ ներառման անհրաժեշտությունը,բայց քանի որ եզրակացության գալու ժամանակ առկա էր միայն ՀՀ Սնանկության դատարանի կարծիքը,որը համընկնում էր հանձնաժողովի կարծիքի հետ և առկա չէր ՀՀ Վերաքննիչ դատարանի կարծիքը/որոշումը/,որը գտել է,որ հայտարարության մեջ ներառելը պարտադիր է,ուստի այժմ արդեն կառավարչի կողմից, տարաժամկետ վճարման պայմանի առկայության դեպքում այն պետք է անպայման իր արտացոլումը գտնի աճուրդի հայտարարության մեջ:

Հանձնաժողովի անդամ Ա.Ադամյանը համաձայնելով հայտնած կարծիքի հետ ավելացրեց,որ ըստ էության հանձնաժողովի եզրակացությունը չի հակասում ՀՀ Վերաքննիչ դատարանի որոշմանը դեռ ավելին այն մինչև որոշումը,որը ըստ էության նախադեպային է, արդեն հայտնել է այն կարծիքը որ հայտարարությամբ ներառելը ավելի ճիշտ կլիներ,բայց քանի որ հանձնաժողովը չունի ՀՀ Վերաքննիչ դատարանի լիազորությունները,ուստի կատարվել է առաջարկի և հատուկ կարծիքի տեսքով և միջնորդել է Դիտորդ խորհրդին ընդունել կարգի վերոգրյալի համար:Հանձնաժողովի անդամը առաջարկեց մերժել կարգապահական վարույթի հարուցումը,քանի որ այն արդեն պետք է հարուցվի գոյություն չունեցող փաստական հանգամանքի հիման վրա:

Հանձնաժողովի նախագահ Տ.Հարությունյանը հայտնեց այն կարծիքը,որ այո իրենք դեռ 05.04.2019թ-ի թիվ 40-1/02 կարգապահական վարույթով մանրամասն քննել և տվել են հիմնավորված եզրակացություն,որին կցել են նաև հատուկ կարծիք առաջարկի տեսքով,որը ըստ էության չի տարբերվում Վերաքննիչ դատարանի որոշմամբ հայտնած դիրքորոշումից, բայց միջնորդել էինք կարճել կարգապահական վարույթը կառավարչի մեղի բացակայության հիմքով,որը գործել էր այդ օրվա դրությամբ պարզաբանված օրենքի կիրարկման պայմաններում,որը նաև գործարար սովորություն էր ձևավորված,իսկ այժմ ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.04.2019թ-ի ԵՇԴ/0046/04/13 որոշմամբ,որը նախադեպային է, օրենքի կիրարկումը փոխվում է,կփոխվի նաև կառավարչի գործողությունների գնահատականները: Բայց հաշվի առնելով այն փաստերը,որ բերեց կառավարիչը,հանձինս կնքված տարաժամկետ պայմանագրի Կողմի կողմից չկատարման և ըստ էության նրա վերացման,վերաբերյալ գալիս են փաստելու որ եթե մինչև անգամ կարգապահական խախտում առակա էր,այն արդեն վերացվել է այս պահի դրությամբ:

Դրա համար նախագահն համաձայն է այն կարծիքի հետ,որ պետք է մերժել կարգապահական վարույթի հարուցումը,քանի որ բողոքի հիմում դրված փաստը՝տարաժամկետ կնքված պայմանագիրը,այս պահին վերացված է չկատարման հիմքով,իսկ չկայացած գործարքը հետևանքներ չի կարող ունենալ,այդ թվում նաև կարգապահական առումով:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին դիմումում նշված հանգամանքները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը և առարկությունները,տվեցին և ստացան համապատասխան հարցեր և արդյունքում համաձայնելով նախագահի առաջարկին:

Հանձնաժողովի անդամ՝Հ.Մարտիկյանը նույնպես համաձայնելով այդ մտքի հետ նշեց որ այնուամենայնիվ,որպեսզի հետագայում,նաև այլ գործերում և այլ կառավարիչների գործողություններում հստակեցում, ավելի հրապարակայնություն և թափանցիկություն ապահովվելու նպատակով,առաջարկել «ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ Խորհրդին ընդունել կարգ ,եթե կառավարիչը ունի մտադրություն վճարումը տարաժամկետել,ապա այդ հնարավորության մասին տեղեկատվություն մտցնել աճուրդ հայտարարության մեջ պարտադիր կարգով:

Հանձնաժողովի անդամները համակարծիք եղան առաջարկներին և քվերկեցին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

1. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 10.05.2019թ-ին ստացված, Կարգապահական հանձնաժողովին հացեյագրված 02.09.2019թ-ին՝«Էյչ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի դիմում-բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով,«Բյուրակն»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝Ռուբեն Խալաթյանի գործողությունների /անգործության/, գործողությունները օրենքներին և կանոնակարգերին համապատասխանության,նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելը մերժել, բողոքի հիմքում դրված փաստը՝«տարաժամկետ վճարման» կնքված պայմանագիրը,չկատարման փաստով, վերացված լինելու հիմքով:

Միջնորդել «ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ Խորհրդին որպեսզի ըստ ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.04.2019թ-ի ԵՇԴ/0046/04/13 որոշման ընդունել կարգ կամ շրջաբերական հետագայում,նաև այլ գործերում և այլ կառավարիչների գործողություններում հստակեցում,միօրինակություն, ավելի հրապարակայնություն և թափանցիկություն ապահովվելու նպատակով՝եթե կառավարիչը ունի մտադրություն վճարումը տարաժամկետել,ապա այդ հնարավորության մասին տեղեկատվություն մտցնել աճուրդ հայտարարության մեջ պարտադիր կարգով:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Մարտիկյան

Հանձնաժողովի անդամ՝Հ.Գևորգյան